

որ ի վերայ իցեն» անոր (Գ): Ուրեմն սա եւս եփոց մ'էր, եւ կրնայ նոյն լինել փոքրիկ թոնրին հետ, որ ցարդ կ'երեւի ի Հայս՝ «թոնրիկ» կամ «թոնրուկ» կոչմամբ, ինչպէս իմացած եմ: Կանոնագրիս խտրութենէն, զոր կը ղնէ ասոր եւ մեծին մէջ, ըսելով՝ որ եթէ անասուն սատակի թոնրին մէջ, սա կը պղծուի եւ պէտք է քակել, իսկ թոնդրուքը մի եւ նոյն պարագային մէջ գտուելով՝ «անվնաս» կը մնայ, կը հետեւի թէ վերջինս միւսին պէս կերակրոց հետ ուղղակի շփման մէջ չէր՝ իւր անմաքրութեամբ զանոնք պղծելու համար. այլ կրակարան էր միայն, եւ իւր վրայ կը դրուէին անօթները, ինչպէս է մինչեւ ցարդ Հայաստանի մէջ:

2. — Կահր: — Ասոցմէ յառաջ պիտի բերեմ այնչափ՝ որչափ աւանդեր է մեզ հին մատենագրութիւնը, որ բնաւ զիտաւորութիւն ունեցած չէ մեր հին խոհանոցին մանրամասն նկարագիրը տալ մեզ: Ահա ուրեմն իւր յիշածները:

Ունեյիք: Անմիջական օժանդակն էր վերոյիշեալ կրակարանաց, հուր կամ խանձող մը բռնելու՝ հանելու կամ ղնելու համար: Համարմատ յն. λαβίς բառին հետ, յոգնակի ձեւով գործածուած է ոչ միայն ուր բնագիրն ալ նոյնպէս էր (ԵԼԵ) ԼԷ, 24.